# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

10 հոկտեմբերի 2018 թվական

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/1**

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 1-ԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ**

2018 թվականի հոկտեմբերի 10-ին, ժամը 11.00-ին, Երևանի ավագանու նստավայրում՝ Երևանի Արգիշտիի փողոց 1 հասցեում տեղի ունեցավ Երևանի նորընտիր ավագանու առաջին նիստը, որին մասնակցում էր Երևանի ավագանու 61 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Մակարյանը։

Երևան քաղաքի նորընտիր ավագանու առաջին նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետի գլխավոր խորհրդականը, քաղաքապետի խորհրդականները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական, կազմակերպական, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերն ու վարչական շրջանների ղեկավարները։

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի ներկայացուցիչներ։

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի՝ նիստը վարում էր Լիլիթ Պիպոյանը։

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի սեպտեմբերի 30-ի հ.79-Ա որոշումը՝ Լիլիթ Պիպոյանը հայտարարեց, որ Երևանի ավագանին ընտրվել է և մանդատները բաշխվել են՝

1) Իմ քայլը կուսակցությունների դաշինք՝ 57 մանդատ,
2) «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 5 մանդատ,
3) Լույս կուսակցությունների դաշինք՝ 3 մանդատ։

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 4-ի «Երևանի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N1 արձանագրության համաձայն՝ Լ. Պիպոյանը ներկայացրեց ավագանու անդամներին, կարդալով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, կուսակցության անվանումը.

**Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից՝**

1. Մարության Հայկ Հրաչյայի
2. Ղազարյան Սրբուհի Ալբերտի
3. Սարգսյան Սերգեյ Գերասիմի
4. Սարգսյան Տրդատ Նորիկի
5. Պապիկյան Մեսրոպ Թևոսի
6. Բաղալյան Լուսինե Խաչիկի
7. Հովակիմյան Վահագն Միսակի
8. Էյրամջյան Սուրեն Գևորգի
9. Աբգարյան ԻզաբելլաՎաչեի
10. Սարգսյան Հրաչյա Հովհաննեսի
11. Ավետիսյան Ալեքսանդր Մելսիկի
12. Մանուկյան Արթուր Իշխանի
13. Խաչատուրյան Նարինե Լևոնի
14. Ցիրունյան Հայկ Զարմիկի
15. Բաղդասարյան Նիկոլայ Յուրիի
16. Մելքոմ Մելքոմյան Գայանե Նորայրի
17. Մանուկյան Արամ Յուրիկի
18. Զաքարյան Լևոն Վարդանի
19. Հովհաննիսյան Հայկ Գառնիկի
20. Աբրահամյան Գայանե Ասքանազի
21. Բաբայան Գևորգ Հայկի
22. Հայրապետյան Ռուբեն Արմենի
23. Գրիգորյան Վահագն Ռոբերտի
24. Պիպոյան Լիլիթ Սուրենի
25. Մնացականյան Աշոտ Վաղարշակի
26. Կարապետյան Արսեն Բորիսի
27. Իսկանդարյան Արման Ազատի
28. Թովմասյան Եվա Ավետիսի
29. Մազմանյան Պավել Արտյոմի
30. Զեյնալյան Նարեկ Արտավազդի
31. Կոտոլյան Արմեն Աշոտի
32. Եղիազարյան Գայանե Արտյոմի
33. Մելիքյան Հակոբ Ալբերտի
34. Հարությունյան Արման Էդուարդի
35. Սիմոնյան Ռուբեն Իգորի
36. Ղազարյան Սոնա Արայի
37. Հարությունյան Սերգեյ Սերգեյի
38. Իսպիրյան Արթուր Դավթի
39. Անտաշյան Կարեն Գառնիկի
40. Ջուլհակյան Արուսյակ Թովմասի
41. Մնացականյան Վիկտոր Վեհամի
42. Սարգսյան Հայկ Իլյուշայի
43. Վարդանյան Գայանե Վիկտորի
44. Խաչատրյան Դավիթ Սլավիկի
45. Գալստյան Սուրեն Արշակի
46. Ավետիսյան Էդուարդ Ռուբենի
47. Հովսեփյան Օվսաննա Մերուժանի
48. Գասպարյան Ավետիս Դավթի
49. Բարսեղյան Էդգար Գագիկի
50. Դավթյան Արթուր Ռազմիկի
51. Մկրտչյան Սաթենիկ Սոկրատի

52. Ապրեսյան Սերգեյ Վլադիմիրի
53. Ասատրյան Սիփան Արամայիսի
54. Խաչունց Հասմիկ Կարենի
55. Ավանեսով Էռնեստ Յուրիի
56. Հովհաննիսյան Լևոն Արմենի
57. Ղալեչյան Արմեն Սպարտակի

**«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակից՝**

1. Աբովյան Արման Վլադիմիրի
2. Մանրիկյան Միքայել Երվանդի
3. Ներսիսյան Արմեն Սասունի
4. Հարությունյան Մարկոս Արաիկի
5. Առաքելյան Հռիփսիմե Էռնեստի

**Լույս կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից՝**

1. Խաժակյան Դավիթ Ռուբենի
2. Խաչատրյան Անի Արշալույսի
3. Սամսոնյան Անի Տաճատի

Նիստը վարող Լ. Պիպոյանը հանդես եկավ հայտարարությամբ, այն մասին, որ Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի ընտրությունների արդյունքով Իմ քայլը կուսակցությունների դաշինքն ստացել է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Իմ Քայլը կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող Հայկ Հրաչյայի Մարությանն օրենքի ուժով համարվում է Երևանի ընտրված քաղաքապետ:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը հրավիրվեց շարունակելու ավագանու նիստը:

Հ. Մարությանը հանդես եկավ ողջույնի ելույթով:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու ս.թ. հոկտեմբերի 10-ի նիստի օրակարգը, որը, համաձայն Երևանի ավագանու կանոնակարգի 102-րդ կետի, ընդգրկում է հետևյալ հարցերը.

1. Ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:
2. Քաղաքապետի երդման արարողության հետ կապված կազմակերպչական հարցեր:
3. Հանձնաժողովների կազմավորում:
4. Հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների առաջադրում:
5. Ավագանու հերթական նիստի գումարման օրվա սահմանում:

1. **ԼՍԵՑԻՆ** - Ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորման մասին:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը հայտնեց, որ ղեկավարվելով Երևանի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով, Երևանի ավագանու առաջին նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը ձևավորելու նպատակով խմբակցությունները ներկայացրել են առաջարկություններ՝ հաշվիչ հանձնաժողովի կազմում ավագանու հետևյալ անդամների թեկնածություններն առաջադրելու համար.

- ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն՝ Էդուարդ Ավետիսյան,
- ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն՝ Մարկոս Հարությունյան,
- ԼՈՒՅՍ խմբակցություն՝ Անի Խաչատրյան

**ՈՐՈՇՎԵՑ** – Հաստատել Երևանի ավագանու առաջին նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը.

1. Էդուարդ Ավետիսյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն
2. Մարկոս Հարությունյան – Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն
3. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցություն

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 58 անդամ
**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ - 58
դեմ – 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

2. **ԼՍԵՑԻՆ** - Քաղաքապետի երդման արարողության հետ կապված կազմակերպչական հարցեր:

Հարցը ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Մակարյանը:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Մակարյանը հայտարարեց, որ, համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 47-րդ հոդվածի, Երևանի քաղաքապետն իր լիազորություններն ստանձնում է իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում Երևանի բնակիչներին տրված երդմամբ:

Հիմք ընդունելով օրենքի նշված դրույթը, Երևանի քաղաքապետ Հայկ Հրաչյայի Մարությանի երդման արարողությունը տեղի է ունենալու 2018 թվականի հոկտեմբերի 13-ին հրավիրված ավագանու նիստում:

Առաջարկվեց ս.թ. հոկտեմբերի 13-ին օրենքի ուժով հրավիրված նիստը գումարել ժամը 12.00-ին: Առաջարկն ընդունվեց միաձայն:

Ներկայացված տեղեկատվությունը Երևանի ավագանու անդամների կողմից ընդունվեց ի գիտություն:

3. **ԼՍԵՑԻՆ** - Հանձնաժողովների կազմավորման մասին:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի և Երևանի ավագանու կանոնակարգի համաձայն գործում է 4 հանձնաժողով.

1) Ֆինանսավարկային և տնտեսական հարցերի հանձնաժողով,
2) Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի հանձնաժողով,
3) Քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողով,
4) Իրավական հարցերի հանձնաժողով:

Ներկայացված տեղեկատվությունը Երևանի ավագանու անդամների կողմից ընդունվեց ի գիտություն:

4. **ԼՍԵՑԻՆ** - Հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների առաջադրման մասին:

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքանակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մշտական հանձնաժողովի նախագահի առաջին պաշտոնի ընտրության համար թեկնածու առաջադրելու իրավունքն ստանում է Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցությունը:

1. Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը ֆինանսավարկային և տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար ներկայացրեց Աշոտ Մնացականյանի թեկնածությունը.

**ՈՐՈՇՎԵՑ** - Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Աշոտ Մնացականյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 59 անդամ
**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ -59
դեմ – 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

2. Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար ներկայացրեց Սաթենիկ Մկրտչյանի թեկնածությունը.

**ՈՐՈՇՎԵՑ** - Երևան քաղաքի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 59 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ -59
դեմ – 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

3. Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար խմբակցության կողմից ներկայացրեց Արսեն Կարապետյանի թեկնածությունը.

**ՈՐՈՇՎԵՑ** - Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արսեն Կարապետյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 59 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ -59
դեմ – 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

4. Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար ներկայացրեց Արուսյակ Ջուլհակյանի թեկնածությունը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արուսյակ Ջուլհակյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 60 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ -60
դեմ – 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

5. Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնի համար ներկայացրեց Լևոն Հովհաննիսյանի թեկնածությունը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Հովհաննիսյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 60 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ -60
դեմ – 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

6. Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնում առաջադրեց Հակոբ Մելիքյանի թեկնածությունը:

Հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Հակոբ Մելիքյանը:

Ելույթի համար գրացվել է ավագանու 1 անդամ.

1.Գայանե Աբրահամյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** - Երևան քաղաքի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հակոբ Մելիքյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 60 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ -60

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը տեղեկացրեց, որ հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասը՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի տեղակալի պաշտոնի համար թեկնածու առաջադրելու իրավունքը խմբակցությունների փոխհամաձայնությամբ զիջվում է Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցությանը:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը և տեղակացրեց, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, ԼՈՒՅՍ խմբակցությանը ևս առաջարկվել է ներկայացնել թեկնածու, սակայն խմբակցությունը հրաժարվել է:

7. Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Արման Աբովյանը քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի տեղակալի պաշտոնի համար ներկայացրեց Մարկոս Հարությունյանի թեկնածությունը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 60 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ -59

դեմ – 0

ձեռնպահ – 1

**Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ**

8. Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանն իրավական հարցերի մշտական հանձնաժողովի տեղակալի պաշտոնի համար ներկայացրեց Գայանե Մելքոմ Մելքոմյանի թեկնածությունը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 60 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ -60

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը հայտարարեց, որ Երևանի ավագանու մշտական հանձնաժողովների կազմերը կհաստատվեն Երևանի քաղաքապետի կողմից՝ համապատասխան որոշմամբ։

5 հարց - Երևանի քաղաքապետ Հ. Մարությանի առաջարկությամբ որոշվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2018 թվականի նոյեմբերի 13-ին, ժամը 11.00-ին։

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 61 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ -61

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

Ներկայացված առաջարկությունն ընդունվեց ի գիտություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Արձանագրեց՝
Ն. Ղուկասյան